

Ազգանուն, անուն-----

Դպրոց, դասարան-----

**ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

2015-2016 ուստարի, հունիս

8-9-րդ դասարան Հայոցլեզու

1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողնված տառերը և կետադրել տեքստը:

(6, -0.5, -0.2)

Ազահ ու անկուշտ խեղճետինը իր գոհերին գաօտնաձածուկ հետևող նկատեց որ շատ ձկներ փոխանակ լողալու գետի հորձանուտում նախօնտրում են խայձալ մեծ քարի խաղաղ ու ստվերոտ գետնախոռոչում: Ջուրն այստեղ օդի պես թափանցիկ էր ու վճիտ և ձկներն իրենց ազատ ու հանգիստ էին զգում ըօբոշխնում արևի ծիածանագօծ լույսը:

Սպասելով խավարօտին գիշերին և համոզված լինելով որ ոչ ոք իրեն չի տեսնում խեղճետինը լողաց դեպի ձկների հանգստի համար ընտրած մամոտ քարը տակը փորեց ու դարան մտավ ինչպես գիշատիչ գազանն իր որօում: Դուրս պօծած աչքերով զգուշորեն հետևում էր շուրջը խայձացող ձկներին կարմրախայտներին բաօտակներին և երբ դրանցից մեկնումեկը մոտենում էր չարանենգն իր չանչերով ճարպկորեն ճանկում էր նրան և մեծ ախոժակով խժօում:

Մի օր էլ աօպրոպ ճայթեց: Գետը վարարեց հորձառատ հեղեղից: Գոռ ալիքները որոտօնդոստ աղմուկով հարվածեցին քարին որը շուռ եկավ և իր տակ ճզմեց սանօարձակ խեղճետնին:

2. Տեքստից գտնել հետևյալ բառերի հոմանիշները:(3 -0.5)

Անդորր-----

թովռալ-----

ականակիտ-----

վայելել-----

թաքստոց-----

բույն-----

Այս մասում ոչինչ չգրել

3. Տեքստից գտնել և դուրս գրել(3, -1)

ա)բուն բացահայտիչի մեկ օրինակ-----

բ)տրոհվող հասկացուցիչի մեկ օրինակ-----

գ)հետադաս ծավալուն որոշիչի մեկ օրինակ-----

4. Տեքստից գտնել և դուրս գրել (2, -1)

ա)մեկ պարզ ստորոգյալ-----

բ)մեկ բաղադրյալ ստորոգյալ-----

5. Գտնել և ուղղել խնդրատրության սխալները:(2, -0.5)

ա)Այդ փաստաթղթերը լիովին բավարարում են ընկերության պահանջներին:

բ)Այդ դժվար ժամանակաշրջանում դա դավաճանեց հայրենիքը:

գ)Աշակերտը միշտ պետք է երախտապարտ լինի ուսուցիչներից:

դ)Ներկաների հետ ծանոթանալուց հետո նա ծանոթացավ նաև փաստաթղթերի հետ:

6. Հեռու, արագ բառերը նախադասությունների մեջ գործածել կապի և մակբայի արժեքով:

(2, - 1)

7. Նախադասությունների մեջ գործածել *ես*, *դու*, *մենք*, *դուք* դերանունները *համար*, *հետ*, *հանձինս*, *մոտ* կապերի հետ (չորս նախադասություն): (4, -1)